

## Արձանագրություն N 152

### ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ-ի մարտի 10 -ի նիստի Օրակարգ

1. 2014-2015թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցումների արդյունքների քննարկում/զեկ.՝ Գ. Պետրոսյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների հաստատում/զեկ.՝ Խ. Գալստյան/:
3. Ուսումնական ծրագրի հրատարակության երաշխավորություն/ զեկ.՝ Խ. Գալստյան/:
4. ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի հաստատում/ զեկ.՝ Ա. Ենգոյան/:
5. Դոցենտի գիտական կոչման համար մրցույթի անցկացում / զեկ.՝ Խ. Գալստյան/:
6. Ընթացիկ հարցեր:

#### Խորհուրդը որոշեց.

1. 2014-2015թթ. ուստարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցումներում ուսանողների արժարժված խնդիրների վերհանման և լուծման նպատակով հանձնարարել ամբիոնների վարիչներին ամբիոնի առաջիկա նիստերում քննարկել սեմինար պարապմունքների արդյունավետության բարձրացման, դասավանդվող առարկաների բովանդակային համապատասխանության, ընթացիկ քննությունների բողոքարկման հետ կապված հարցերը:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.  
ա/ Սլավոնական համալսարանի առկա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Սևակ Հակոբյան՝ «Պառլամենտարիզմի կատարելագործման և միջազգային փորձի կիրառման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:  
Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:  
բ/ ԵՊՀ հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Էդգար Էլբակյան՝ «ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունները 1991-2009թթ.», ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:  
Գիտական ղեկավար հաստատել պ.գ.դ., դոցենտ Ա. Եղիազարյանին:  
գ/ ԵՊՀ հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Սիրանուշ Մելիքյան՝ «Պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները ՀՀ քաղաքական գործընթացներում. հոգևոր անվտանգության հիմնախնդիրները», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»

մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

3. Երաշխավորել տպագրության Աշոտ Ալեքսանյանի «Արդյունավետ միջազգային հաղորդակցություն» դասընթացի ծրագիրը:
4. Հաստատել ԵՊՀ ՄԻջազգային հարաբերությունների ֆակուլտետի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը:
5. Ընտրել ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ք.գ.թ. Աբրահամ Գասպարյանի, պ.գ. թ. Արամ Մանուկյանի, ք.գ.թ. Էդգար Քալանթարյանի, բ.գ.թ. Լիա Պետրոսյանի անունները:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 29 անդամներից քվեարկությանը մասնակցել են 23-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

**Գասպարյան Աբրահամ – 21 կողմ, դեմ չկա, 2 անվավեր քվեաթերթիկ:**

**Մանուկյան Արամ – 22 կողմ, դեմ չկա, 1 անվավեր քվեաթերթիկ:**

**Քալանթարյան Էդգար – 22 կողմ, դեմ չկա, 1 անվավեր քվեաթերթիկ:**

**Լիա Պետրոսյան – 22 կողմ, դեմ չկա 1 անվավեր քվեաթերթիկ:**

*Գիտական խորհրդի նախագահ, պրոֆ.*

*Գ. Պետրոսյան*

*Գիտական խորհրդի քարտուղար, դոց.*

*Խ. Գալստյան*